ՈՒՍՏԻԱՆ.– (Շատ լուրջ) Թէ ուզում ես ուտենք: (Ներս Է մտնում Սենեկապետը սպասաւորների հետ, որ ճաշ Է բերում սինիներով՝ վրան պէս-պէս խորտիկներ, ծաղիկներ եւ այլն: Սինիները դնում են Նազարի եւ Ուստիանի առջեւ՝ խոնչայի վրայ: Երկու մանկլաւիկ անցնում են Նազարի եւ Ուստիանի հետեւի կողմը՝ թեւքերին եւ ուսերին զանազան ուրիշներ ու սպասում են, որ սրանք ուտեն: Մանկլաւիկները բաց են անում սրբիչները, ու երբ Նազարը կամ Ուստիանը ուզում են բերանները, մատները սրբել, կիսովին ետ են շրջում դունչները կամ ձեռները, եւ սպասաւորները սրբում են հետեւից): Էո՛ֆ: Լազա՛թ: (Հանկարծ բրնձի հատիկն ընկնում է Նազարի քիթը:)

ՆԱԶԱՐ.– (Փռշտալով եւ դէմքը ծամածռելով) Է՛, Է՛, Է՛…

ՈՒՍՏԻԱՆ.– Ամա՛ն, ի՞նչ է…

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– Արհաւի՛րք, արհաւի՛րք, կոչնա՛կ… Բրնձի հատիկ ընկաւ Գերագոյնի քիթը… (Ներս են վազում բոլոր պալատականները, դրսից լսւում է) «Արհաւի՛րք»: Կոչնակ են զարկում:

ԲՈԼՈՐԸ.– Արհաւի՛րք… (Չոքում են:)

ՆԱԶԱՐ.– (Փռշտում է եւ ազատւում բրինձի հատիկից:)

ՆԱԶԻՐ.– Խոհարարն Է մեղաւոր:

ԲՈԼՈՐԸ.– Ի՞նչ ոճիր:

Դէպի դուրս:

ՎԵԶԻՐ.– Կտրեցէ՛ք խոհարարի գլուխը: (Գնում են հրամանը կատարելու:)

ՆԱԶԱՐ.– Փլա՛ւ տուէք…

ՏԷՐՏԷՐ.– Հրաշագործ փրկութիւն արքային մերոյ:

ԲՈԼՈՐԸ.– Փա՛ռք տիրոջ… (Արտասւում են:)

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– (Դէպի դուրս) Ցնծութի՛ւն, ժողովո՛ւրդ… (Դուրսն ուրախութեան ձայներ, կոչնակ եւ այլն:) Յայտնուեց հատիկը վեհի քթից:

ՄԻ ՊԱԼԱՏԱԿԱՆ.– (Ներս գալով) Թագաւոր մեծ, խոհարարի գլուխը կտրեցին:

ՈՒՍՏԻԱՆ.– Կա՛րեմ բերանը, շատ էլ լաւ արին, թագաւորական փլաւն էսպէ՞ս կեփեն…

ՆԱԶԱՐ.– Դէ, գնացէ՛ք, գնացէ՛ք, եա՛լլա: (Բոլորը դուրս են գնում:) Ինչ էի ասո՞ւմ: Իշի կտորներ: Թողնո՞ւմ են, որ մարդու միտքը տեղը մնայ: Հա՛: Փլաւից էլ մի քիչ դեսն արէք: (Հեռացնում են, ատամ է:) Էո՛վ: Գինի լցրէք: (Նազիր, վեզիր, զօրավար եւ պալատականներ ներս են վազում:)